ՀԱՅՐԵՆԱԿԱՆՔ

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵ՛ՆԻ

Այս երկրի յոգնած, քարակոփ հողի
Ամէն փլուրը
Անառիկ բերդի մը սիւն է եղել.
Այս երկրի շիկնած լեռները ճեղքող
Մի կաթիլ ջուրը
Մի անտառապատ դաշտ է հեղեղել:
Այստեղ ամէն մի քար ու թփի տակ
Կայ ընկած մի թագ,
Այստեղ ամէն մի աննշան բլուր
Պահում է ընկած արքայի մի սուր:
Ամէն խաչքարի մամռոտ կողերին
Պատմութիւններ կան
Ծուարած լռին՝
Թէ մոխիրներից քանի՜ բիւր անգամ
Եղել են խորհող գմբէթներ քարէ,
Թէ հայ բնաւեր շինականը ծեր
Ինչպէս է արնոտ
Հողը յարդարել,
Ինչպէս է այրուած անապատներում
Այգիներ շինել դրախտավայել,
Կերտել, կառուցել,
Ու դեռ չաւարտած
Աւերման ահով աշխարհին նայել:
Արեամբ է գրուած պատմութիւնը մեր,
Անուններն մեր՝ զոհերի ցուցակ,
Եւ դո՛ւ, միայն դո՛ւ, պայծառ հոկտեմբեր,
Վերջակէտ դրիր այդ ցուցակի տակ:

1950 թ.

digitised by A.R.A.R.@